

15814

891 99

7-34

891.542

7-34

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

Տ Ա Ր Ե Ց Ո Յ Ց

ԵՒ

ԳՈՒՇԱՆՈՒԹԻՒՆՔ

ԽԻԿԱՐԻ

1892

2003

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Ա. Գ. ԴՅՄԵՏԵՆՅԱՆ

1891

891.542

7-34

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

uy

Տ Ա Ր Ե Ց Ո Յ Ց

ԵՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ

ԽԻԿԱՐԻ

86948
36948
8001

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

1892

3503

ВУЛКАНИЗМ

ВУЛКАНИЗМ

ВУЛКАНИЗМ

Доз. ценз. Тифлисъ 9 Августа 1891 г.
 Типогр. М. Д. Ротинианца, на гол., пр. соб. д. № 4

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՔ



Գլխաւո իրայ— Ես քուկին սպասաւորդ չեմ
 Ո՞ր պէսնաւինք ձաղը— Կուզեմ հեռանալ և
 գլուխ չցաւցնել:

Կը Բողոքէ՛մ— Ահ եթէ կարենայի չարիք մ'ը-
 նել քեզ:

Սաւրճ մը հաւանէ՞ք — Գործ ունիմ, բաներնիդ
 դացէք:

Զէք էրէւոր հօր — Պարտքդ երբ պիտի վճա-
 րես աղա:

Կը խոստանամ— Բան մ'ալ չեմ կրնար ընել:
 Կբնանք չէ՛ մը պէսնաւի կըրնաք ինձի չորս
 հարիւր ոսկի տալ:

Ի՞նչ է Ձեր հաշիւը — Այս օրերս չեմ կրնար
 քեզի ստակ տալ, քիչ մ'ալ համբերէ:

Աղան դուրս չէ՛նք հօր — Հիւր ընդունելու
 ժամանակ չունինք:

ՅՈՒՆՈՒԱՐ

1—8 ՅՈՒՆՈՒԱՐ

Անձրեւարեր հողմեր և սնանկութիւններ:
Պղտիկ տղայներն ու մեծ տղայները — ծերե-
րը — պարտին զգուշանալ ցուրտէն: Խոնաւութիւն
կը տիրէ ամենուրեք. հարբուի և պրզտիկ պարտ-
քեր ունեցողներն սննհակէ դուրս ելնելու չեն:
Իրարու Նոր Տարի, երկար օրեր և բարօրու-
թիւն կը մաղթեն աջեատմները:
Հաշուէկշիւները գոհացուցիչ չեն:

9—17 ՅՈՒՆՈՒԱՐ

Փոփոխական օրեր:
Քանի մը լրագիրներ կը փոխեն իրենց կար-
ծիքները:
Երեսփոխանին մէկը ատենաբանութեան մէջ
կը կորսնցնէ խօսքին թելը և կերթայ մոմ վա-
ռելու Ս. Մինասին: *)
Բանաստեղծին մէկը ծով կնեռէ ինքզինքն
մէջքը դդում կապելով:
Մեծ վաճառական մ'իւր պարտքերը վճարելու
համար վճարումները կը դադրեցնէ: Ատուած
հետը ըլլայ:

*) Կ. Պօսեցիք կորուստ ունենալէն առհասարակ մոմ
վառելով գէմու մ'են Ս. Մինասին: Սուրբի մասին այդ կար-
ծիքը յայնեւից տարածուած է Հայերի մէջ:

18—24 ՅՈՒՆՈՒԱՐ

Ամպամած և խոնավ:

Քանի մը ընկերութիւններ կը լուծուին:

Նրիտասարդին մէկը հարուստ աղջիկ մը կը յափշտակէ, տունը կը տանի և հազար հինգ հարիւր ոսկի փրկանք կը պահանջէ: Աւագակը փրնռուելու վրայ է:

Բառարան.

Փականք — Բրախմ (դրամօժիտ):

Ամուսին մը հազար ոսկի փրկանք կը խոստանայ իւր կինը լիւ մը տանողին:

Ասանկ ամուսիններուն համբերութիւն տայ Աստուած:

25—31 ՅՈՒՆՈՒԱՐ

Զիւն և անձրև:

Հողագործներն ուրախ են:

Ածխալաճառներուն հետ խօսիլը դժուար է:

Մայրեր, մայրեր.

Զգուշացէք ամսոյ մէջ մանչ գաւկի տէր ըլլալէ, որովհետեւ յունուարի մէջ ծնող մանչը կուտասէր կըլլայ: Աշխատեցէք աղջիկի տէր ըլլալ: Յունուարի մէջ աշխարհ եկող աղջիկը տընտեսագէտ և սակաւախօս կըլլայ: Նրկութեն մին ալ ըլլայ դարձեալ կը բաւէ:

ՓԵՏՐՈՒԱՐ

1—8 ՓԵՏՐՈՒԱՐ

Գիտէք արդէն որ այս ամսուան մէջ կանայք քիչ կը խօսին:

Հարաւը մէկ կողմէն կը փչէ, հիւսիսը միւս կողմէն, երկու հողմերուն մէջ տեղ երերա ու երերա: Լրագիրներն ալ անանկ կ'փչեն:

Բժիշկները աղէկ ստակ կը շահին:

Մարդասիրական ընկերութեան մը գանձապետն ընկերութեան դրամագլուխը հետը կ'առնէ ու հեռաւոր քաղաք մը կերթայ օդափոխութեան համար:

Աստուած բժշկութիւն տայ:

8—15 ՓԵՏՐՈՒԱՐ

Հողմ և անձրև:

Կամուրջի վրայ զգուշացէք հովանոցներէն որ անքերնիդ չհաննին:

Առևտրական հրապարակին վրայ շարժում մը կը տեսնուի:

Ապառիկ մի՛ վաճառէք, այլ միշտ աշխատեցէք ասպառիկ գնելու:

Ալէկոծութիւն:

15—22 ՓԵՏՐՈՒԱՐ

Անձրևին վերջը չեկաւ:

Տեղ տեղ կը ձիւնէ:

Գինեատունները լիքի լեցուն: Օղին ածուխէն
արժան է:

Կուրծքի տկարութիւն ուեցողները վառա-
բանին քով կը նստին և Խէչոյ կը կարդան. Խի-
կարի քանի մը թուղթ ընթերցումն միակ զեղ
է կուրծքի տկարութեան զէմ, շընչափողերը կը
մարբէ:

22—29 ՓԵՏՐՈՒՄ

Խառնակ օդ:

Խառնակ լուրեր:

Տեւէք սա խեճ գաւառացին, զլխէն արիւն
կը վազէ:

Կնիան մէկը մարտ նետեր է *). անուշադրու-
թեամբ մարդուն զլուխը նետեր է սափորը պատշ-
գամէն:

Լրադրաց խօսքին մի՛ հաւատար:

Մայրեր.

Եթէ իմ՝ խրատիս կը լսէք այժ ամուռան
մէջ զաւակ մի՛ բերէք, ոչ մանչ, ոչ աղջիկ. վասն
զի՛ Փետրուարի մէջ ծնող մանչերն զինեմով ու
կերուխումի անձնատուր կըլլան, իսկ աղջիկներն
շուալ ու պարասէր կըլլան, իսկ երբ կարգուն
իրենց ամուսնոյն զլխուն փորձանք կըլլան:

*) Յոյներէջ վերցնելով Հայերն էլ Մարտ 1-ի զեշերը
պատուհանից փողոց են դնում մէ խեցեգէն անոթ, հա-
ւատալով որ դրանով նոյն ասորուայ լուրերը պիտի պակա-
սին տանից: Այս գործողութիւնը անւանվում է „Մարտ
նետեր“:

Բնւմ . . .

Մի վախնաք:

Մեծ վաճառական մը անանկապալ, բան մը է.

ՄԱՐՏ

1—9 ՄԱՐՏ

Հողմն անձրեւ, ձիւն, արեւ.

Օղերու Քաթուրա:

Կը խրատեմ ծերերուն ու վատաբողջներուն
դուրս չելնել, վտար Տիրոջը, դուրս ելնելու պատ-
ճառ մ'ալ չկայ, առեւտուրները զաղրած են. ա-
մեն մարդ փոխառութիւն ընելու համար միայն
դուրս կ'ելնէ:

Ապահովական ընկերութիւններն բաւական կը
գնաուն, շատ նաւեր իրենց բնոյր ծով կը թա-
փեն ալէկոծութեան պատճառաւ: Կնիան մէկըն
ալ իր էրիկը ծովը կը նետէ:

9—16 ՄԱՐՏ

Հողմը չղաղարեցաւ:

Տեղ տեղ կանձրէկ:

Դաւառի մը մէջ սովը կը սաստկանայ. Հան-
գանակութիւններ կը բացուին սովելուց յօգուտ:

Անբան կենդանիներու մէջ հիւանդութիւն
երեւան կուգայ. բանաւոր կենդանիներու մէջ
դրամի պակասութիւնն ուրիշ բան չտեսնուիր:

Վաճառականին մէկը տասը հարար ոսկի կը
վաստկի սնանկութեամբ:

16—22 ՄԱՐՏ

Զմեռը կը ծերանայ:

Բաղդատեցէք չմեռեալ ծերեր բառերն, կը կարծուի թէ չմեռեալ ծերէն ելած ըլլայ ծերն ալ չմեռէն. Բանասերներուն կարծիքը կը հարցուի:

Այսու ամենայնիւ չըլլայ որ հագուստնիդ թեթեւցնէք, հագուստի մասին որ և է փոփոխութիւն փնտրակար է այս միջոցիս, հագուստը սկզբունքի չնմանիր:

22—31 ՄԱՐՏ

Հողմային պարզութիւն.

Սրտի պարզութիւնը կը փնտրուի. Մսին զիրը կը բարձրանայ:

Երկաթուղու մ'ընկերութիւնը կ'որոշէ առաջատու բանալ իւր կառքերու վրա որպէս զի քիչ մ'աւելի արագ ընթանան:

Այս ամսուան մէջ ծնող մանչերը ազգային նուիրատուութեանց չեն մասնակցիր և ազգին մէջ կռիւ հանելու արամադրութիւն կունենան: Իսկ աղջիկներն պճնասէր ու շուտ կըլլան:

Մայրեր, իննացեցէք ազգին.

ԱՊՐԻԼ

1—7 ԱՊՐԻԼ

Ապրիլին առաջին օրը կատակի համար սուտ խօսելու սովորութիւնը կամաց կամաց բնութիւն դարձաւ ամենուս քով, այնպէս որ այսօր քիչ

մարդ կը գտնուի որ սուտ խօսելու համար ապրիլ 1-ին սպասէ:

Զգուշացէք խաբեքացներէն . . . շաղակրատ բժիշկներէն:

Քանի մը պզտիկ հրդեհներ կը պատահին:

Կղզուց մը մէջ երկրաշարժի ցնցումներ կը զգացուին:

Մտավաճառութենէ սնանկացած մէկը քահանայ կը ձեռնադրուի:

8—14 ԱՊՐԻԼ

Ախորժելի օդ:

Հետեւեալ հրաշքները տեղի կունենան.

Մարդ չսնանկանար.

Մարդուն մէջը հայերէն լրագրի մը բաժանորդ կը գրուի և բաժանորդագրի կանխիկ կը փճարէ:

Մէկն Գնացիկէն *) մեծ գումար մը կը շահի.

Առանց Լուսնի կնիկ մը կը տեսնուի հրապարակի վրայ.

Բանասէր մը լեզուաբնական յօդուած մը կը հրատարակէ առանց հայհոյութեան:

Օդին դեղեցկութենէ խաբուելով հագուստնիդ մի պակասցնէք: Ապրիլ շողոքորթ ամիս մ'է.

15—21 ԱՊՐԻԼ

Ամպամած և խոնավ:

*) Տաճկական արժեթուղի:

կաթերը բոլորովին ջուր կ'ըլտրին:
1892-րդ. տարեգարձ ղինովութեան:
Զատիկի առթիւ գինիի տակառներուն մէջ
խեղդողներ կ'զտնուին:

22—30 Մ Ա Ր Ի Լ

Ախորժեղի եղանակներ:
Գինովութիւնը կը շարունակուի:
Էրիկ մը կնիկէն ծեծ կուտէ հաւկիթ զնաժ
չըլլալուն համար:
Եպիսկոպոսին մէկը ինքզինքը կերուխումի
տուած կը մերժէ դաւառի մ'առաջնորդութիւնն
քաջատողջութեան պատճառաւ:
Այս ամսոյս մէջ ծնող մանչերը խաբերայ ու
մեծ վաճառական կըլլան, աղջիկներն ալ անտե-
սագէտ ու գեղեցիկ, միայն թէ քիթերնին քիչ
մեծ կըլլայ:

ՄԱՅԻՍ

1—7 Մ Ա Յ Ի Ս

Յատակ օդ:
Գիւղագնացութեան պատճառաւ ամեն տուն
մէջմէկ քիչ կ'ուի:
Առուտուրները բացուեցան:
Ոսկերչաց շուկայն լի է բազմութեամբ. ար-
ժան մատնիներ, օդեր, սպարանջաններ, մանեակ-
ներ կը ծախէ ժողովուրդն ածուրդով և ոսկե-
րիչները կը գնեն:

Հազարաւոր տուներ, գետիններ կը վաճա-
ռուին խիստ արժան գնով:
Խմբագիրները տան միջնորդ կը դառնան:
Աստուած վերջերնիս բարի ընէ:

8—13 Մ Ա Յ Ի Ս

Օղը կը շարունակէ յստակութիւնը:
Մութի մէջ խնդիրներ կան որոց ոչ ոք կըր-
նայ վերահասու ըլլալ:
Կանանց շրջագրեւորները քիչ մ'ալ կը կար-
ճընան: Քանի մը կանայք էրիկ մարդու հա-
զուտ կը հագնին:
Հունձքերը լաւ երեւոյթ ունին. բայց հաս-
կերուն մէջ բան չկայ. իմաստակ հասկեր:

14—20 Մ Ա Յ Ի Ս

Դեռպան մ'ուրիշ դեպքանի մը տունը կը
հրախրուի կերակուրի:
Հիւպատոս մը նեղ և պզտիկ կօշիկ հագնե-
լուն համար փողոցէ մը անցած ժամանակ կից-
նայ: Լրագիրք ոմանք քաղաքականութիւն մը կը
տեսնեն այդ կօշիկին մէջ:

21—28—31 Մ Ա Յ Ի Ս

Օդերուն խօսք չկայ բաց ի շնորհակալութենէ:
Տաքութիւնը հետզհետէ կաւեւանայ: Շատ
ամուսիններու մէջ պաղովութիւն կը տիրէ:
Հողագործներն շատ ուրախ չեն: Շատ փո-

խանակադիրներ կը մերժուին: Մատակարար մը կը ճանրուի: Խոհարար մը սպասուհւոյ հետ սիրահարութիւն կընէ հարուստ տան մը մէջ:

Զգուշացէք ամսոյս մէջ զաւակ բերելէ, մանչերը կամ գրաշար կամ բանաստեղծ կամ դաստու կամ խմբագիր կ'լլան. իսկ աղջիկները միշտ նշանաւոր խօսքեր կ'ուզեն լսել:

ՅՈՒՆԻՍ

1—5 ՅՈՒՆԻՍ

Ջերմութիւնը կ'աւելնայ:

Կնաթողութիւններ կը լսուին:

Մարդուն մէկը նարտ խաղացած ժամանակ կ'ընայ կը մարի չկրնալով հանդուրժել Կէլայի հաւաքներուն:

Ընդ. Ժողովոյ մէջ ջերմ վիճաբանութիւն մը տեղի կ'ունենայ. երեսփոխանին մէկն իւր ընդդիմախօսին մէջքին կից մը կ'ուտայ:

6—12 ՅՈՒՆԻՍ

Տաք օդ:

Օղեմոյները կսկսին գարեջուր խմել:

Լրագիրք գրելու նիւթ չեն կրնար գտնել:

Երկու մեծ գայեր կը ձերբակալուին:

Մատակարար մը իւր տան տիկնոջը աչք կը անկէ:

Տղայաց շատ պտուղ մի տաք:

Ամուսնացեալ մարդ մը աչք կը անկէ ուրիշի կնոջ վրայ

13—19 ՅՈՒՆԻՍ

Օդը յստակ:

Տաքութիւնը կ'աւելնայ. արխնային մարդոց համար բարկանալու եղանակ չէ . . . թող որ Փրկիչն *) ալ լեցուն է:

Առևտուրները կը դադարին:

Ամեն մարդ ծովու բաղանիք փարձելու ետեւէ է:

Երկաթուղւոյ մը շինութիւնները մեծ փութով առաջ կը տարուին:

Մարդուն մէկը սլարոքը կը վճարէ այն օրն յորում տալ խօստացած էր: Խենդ մարդ . . .

20—27—30 ՅՈՒՆԻՍ

Պիտի ճաթինք տաքէն:

Անգնաս փորհարութիւն մը կայ շատ մարդոց մէջ:

Ամերիկան նոր դիւտ մը կընէ: Շոգենաւի մը ածուխը կէս ճամբան կը հասնի և չկրնար ճամբան շարունակել:

Ամսոյս մէջ ծնող մանչերը խելացի կ'ըլլան իսկ աղջիկները դաշնակահար:

*) Կ. Պօլոյ Ս. Փրկիչ ազգային հիանդանոցը ու յիմարանոցը:

ՅՈՒԼԻՍ

1—4 ՅՈՒԼԻՍ

Տաքութիւնը սաստիկ է:

Վանքի մը մէջ քանի մը կրօնաւորներ պայ-
մանագրութիւն կը կնքեն սիրով և միաբանու-
թեամբ վանքը կողոպտելու համար:Թերթ մը կը ղաղրեցնէ իւր հրատարակու-
թիւնը:Ժողովոյ մը անդամներուն մէջ երկպառակու-
թիւն:Տեսէք սա ցնդած պառաւը, հարս կըլլայ, երե-
սուն տարու երիտաւարդի մը հետ կը կարգուի:

5—11 ՅՈՒԼԻՍ

Տաքութիւնը մի և նոյն է:

Արք և կանայք ծով կերթան լւացուելու:

Երկու օրուան մէջ անգղիերէն սորվեցնող
քերականութիւն մը կհրատարակուի:Կանանց լեռաններուն վրայ մէյմէկ ծա-
ղիկ կը զրուի:

12—19 ՅՈՒԼԻՍ

Պարզ և տօթ:

Գինովներուն վիճակը ցաւալի է:

Մեծ մարդ մը կը պզտիկնայ և պզտիկ
մարդ մը կը մեծնայ:

20—31 ՅՈՒԼԻՍ

Աշխարհիս խաղաղութիւնը պահելու հա-
մար տէրութիւն մը կաշխատի: Յորենի զինը
կիցնայ. հացի նկանալներու մէջէն մէյմէկ կտոր
ածուխ կելլէ:Ամսոյ մէջ ալ ծնելն աղէկ բան մը չէ. ման-
չերն կնաթող կ'ըլլան, աղջիկներն թշուառ. ալ
խորհեցէք անգամ մը:

ՕԳՈՍՏՈՍ

1—9

Ձերմութիւնն քիչ մը նուազեցաւ:

Բոլոր աշխարհ ինքզինքը կերուխումի տուած է:

Առատուները անդալի կերպով կը բացուին:

Կը խնդրեմ սա սեխերը ծով նետեցէք: Կուրծ-
քի տկարութիւն ունեցողները ծով չմանեն:

10—17 ՕԳՈՍՏՈՍ

Զովութիւնը կսկսի, ինչպէս նաև հարբուխը:

Ծովէն ելնելէ վերջը նայեցէք որ գլուխնիդ
չօրնայ:Առաւօտները անօթի փորանց խաղող կե-
րէք որքան որ կը ներէ ձեր քսակը:

Երածիշտներուն ձայնը աշխարհ ղռներ է:

Խեղճ ձայնաւորներուն ձայնը չեղներ: Եկեղե-
ցի դացող չը կայ:

Մեծ քանակութեամբ բուսի կսպառի:

18—25 ՕԳՈՍՏՈՍ

Մնանիութիւններ:

Թաղական մը պզտիկ դումար մը կառնէ թաղին սնդուկէն և իւր աղջիկը կը կարգէ:

Պատրիարքարան մը քանի մը պաշտօնեայնոր կը ճանքէ խնայողութեան պատճառաւ:

Կոշիակար մը քաղաքական յօդուած մը կը հրատարակէ:

Ամպամած, պիտի անձրեւէ:

25—31 ՕԳՈՍՏՈՍ

Զովութիւն. զիշերները մի նստիք ծովեզերքը. Միգուկներէն հանգիստ չկայ. Յիսունը հինգ տարու կին մը հինգ հարիւր ոսկի կը խոստանայ հետը կ'սրգւողին:

Այս ամսոյս մէջ ծնող մանչերն ալ աղջիկներն ալ բախտաւոր կըլլան. աղքը պէտք ունի անանկ մանչերու և աղջիկներու:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1—8 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Մերթ անձրև մերթ արև ուստի՝

Մերթ արտասուք մերթ ժպիտ

Մի լայք, Աստուած ողորմած է:

Առուտուրները դադրեցան. հարուստներն աղքատներու վիճակը չեն ուզեր իմանալ:

9—16 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Իրաց վիճակը կը մնայ մի և նոյնը. թէև տիւ և զիշեր կը հաւասարին բայց հատույթը և ծախքը չեն հաւասարիր, ծախքը աւելի մեծ է. Աւելի աղէկ էր որ տիւը քիչ մը մեծ ըլլար և ծախքը պզտիկ: Կնիկները այս լեզուէն չեն հասկնար և էրիկներուն զլուխը կուռեցնեն աշնան նորաձեւութեան պատրաստուելու համար:

16—23 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Հարաւային հողմը ուժով կը փչէ: Ծովու վրայ գտնուողներուն համբերութիւն մաղթենք. ցամաքի վրայ գտնուողներուն ալ վիճակը աղէկ է. Ո՛րք ապրելու է հապա. երջանիկ ապրելու համար տեղ մը չգնուեցաւ վերջապէս:

Զուկը հարուստները կուտեն. Միսը սուղ է. Աղքատներն ինչ ուտեն:

23—30 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ամպավար հողմեր.

Սանկ մէկդի կեցէք. քանի մը վաճառականներ կերերան ու կերերան. Սա թղթաբեր շոգինաւուն նայեցէք քաշուած բոլոր փոխանակագիրներն ետ բերեր է:

Իրամական տաղնապ:

Հացագործ մը հարուստ կարծուած էՖէնտիկ մը դուռն ափ առած չլսուելիք խօսքեր կընէ,

տան տէրը չ'լսելու կը զարնէ իրեն ուղղուած հայհոյութիւնները:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1—8 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Երբեմն պարզ, երբեմն խառն, երբեմն անձրև, երբեմն փոթորիկ:

Հարսանեաց շաբաթ. կարգուող չկայ:

Լրագիր մը մեծատուն մը կը շողոքորթէ:

Բնդհանուր հազ. անոնք որ գիւղ գնացած էին կը դառնան ձմեռնային բնակութիւնը. օդափոխութիւնը շատերուն մազերը ճերմկեցուցած է. օդափոխութենէ անանկացողներ ալ պակաս չեն:

9—16 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Խառնակ օդ:

Երկրագործը շատ զոհ չերևիր.

Աշնան նորաձևութիւնը շատ տուներու մէջ կուոյ դռներ կը բանայ. Երևելի մարդ մը կը մեռնի. Ածխավաճառները կը լեցնեն իրենց մթերանոցները. Աստուած խելք տայ իրենց

16—23 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Խառնակ, խառնակ վերջապէս խառնակ:

Սրտի հիւանդութիւն ունեցողները կը նեղուին. երանի անոնց որ սիրտ չունին, ազատ են այդ հիւանդութենէ. Լրագրին մէկը երէկուան պաշտածն այսօր կայրէ: Զերմուկներու վարժ-

ուած կրօնաւոր մը անարժանաբար աթոռի մը վրայ բարձրանալու կը պատրաստուի, ազգին սանձերը բռնելու համար. Աստուած ողորմի: Հաբուստ աղջիկ մը հօրը տունէն կը փախչի:

23—31 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Հողմ և անձրև: Թատրոններու եղանակ, բոլոր օթեակները պարապ են:

Յօթն շաբաթուց վերջերն ենք, հարսնիք չլսիր բնաւ. Բարձրագոյն մեծ հարուած տուաւ այս տարի թէ գեղեցիկ աղջիկներուն և թէ տղեղներուն:

Ամսոյս մէջ ծնող մանչերն փառաւոր ապագայ կը խօստանան, աղջիկներն ալ փայլուն անցեալ մը. Ըստ այնմ վարուեցէք:

ՆՈՅՏԵՄԲԵՐ

1—7 ՆՈՅՏԵՄԲԵՐ

Օդին խառնակութիւնը շարունակելի է:

Հարուստ կարծուած մէկը գիրքերը վիճակաւորութեան կը դնէ:

Ածխավաճառները կը սխալին իրենց գուշակութեանը մէջ, օգը թէև խոտնակ ալ բարեխառնակ է:

Մովային ճանապարհորդութենէ հրաժարելու է: Լրագրի մը մէջ շինծու նամակներ կը հրատարակուին. հաւտալու չէ:

Աղքատ մարդ մը գինով կըլլայ և փողոցը

կը պառկի քթին տակէն մրմնալով. «Յս բանաստեղծ եմ»:

8—15 ՆՈՅՆՄԲԵՐ

Այս խառնակութեան վերջը . . .

Աղքատ մը վիճակահանութենէն տասներկու հազար ոսկի կը շահի և բարեկամաց բարե տալը կը դադրեցնէ:

Նոր հանք մը կը գտնուի, սուտերու հանք խմբադրի մը կողմէն:

Շուկայն մարդ չկայ. ակուալի ցաւերը կը շատնան. կէս դիտու ցաւեր երևան կուգան. գործերը ձախող վիճակի մէջ են. քաջութիւն, բաշտութիւն:

Ամեն մարդ օղիի գաւաթին մէջ կը փնտռէ մխիթարութիւն:

16—21 ՆՈՅՆՄԲԵՐ

Պարզ և մերթ անձրև:

Օրհնեալ է Աստուած:

Ծառերը մերկացան: Ձմեռն կսկսի զգալի ըլլալ. մինչև առտու զիւն կը խաղացուի ամեն տեղ. Տեղ տեղ ալ լռութիւն: Ամենքն աչքերնին չորս բացած զիրար կողոպտել կը ջանան. անմեղ ըզբօսանք:

21—30 ՆՈՅՆՄԲԵՐ

Մերթ լռութիւն մերթ լռութիւն: Երիտասարդին մէկը պարահանդէսի մէջ աղջիկ մը կը գտնէ, կառնէ հետը կը տանի կարգուելու:

Ուրիշ սիրահար երիտասարդ մը մինչև լոյս պատուհանի մ' առջև կապակէ ու կը դողայ. մէկէն ի մէկ հարստանալը դիւրին չէ տղաս:

Այս ամսոյ մէջ ծնող մանչ կամ աղջիկ երկուքը մէկէն բարեպտուղ զաւակներ կըլլան եթէ անոնց դաստիարակութեան հող տարուի:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1—6 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Քիչ մը հողմ քիչ մը մ'անձրև:

Մեծ մարդու մը հովանաւորութեան ներքև պարահանդէս մը կը տրուի: Խմբադրին մէկը վարդապետ կը ձեռնադրուի, վարդապետ մ'ալ կ'աւտուի: Փոխառութեան զրոյցը կը լսուին: Գողեր կը մանեն տուները և մէկ մէկ քիչ բան վերցնելով կը շատանան. աւրին ասանկ սակաւապետ զողեր:

7—14 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Անձրև և ձիւն. տժգոհութեան պատճառ տալու չափ ցուրտ չկայ, լրագրի մը յարձակմանց մէջ քիչ մը պաղութիւն կայ:

Հարուստի մը գաւաղը երգիչ օրիորդի մը հետ կը փախչի. երթան բարեալ:

Լեզուաքննութիւնն քաջ մ'ալ առաջ կերթայ:

14—21 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Բժիշկ ըլլալու ամիս:

Քիթ մը չկայ, գլուխ մը չկայ, ակռա մը չկայ, ականջ մը չկայ որ չցաւի. ինչ խաչտառակութիւն է աս. յանցանքն իրենցն է, զգուշանան թող, մինչև լոյս պարելու հետեւութիւնն է:

Բժիշկներն ալ թող վատտկին, ողջ ըլլան որ մեռցնեն մեզի:

22-31 ԴԵՅՏԵՄԲԵՐ

Անձրեւխառն ձիւն:
Հաշուէկշիռներ հանելու պատրաստութիւններ
Հարուստ մը չորս աղքատ աղջիկներ կը կարգէ հոգւոյն համար: Պետական մարդու մը ճառէն կը հասկցուի թէ աշխարհիս խաղաղութիւնը անկողով պիտի մնայ:
Ամոցս մէջ ծնող զաւակներէն մեծ բան չակնկալուիր:
Մ'անք բարով:
Տեսնուինք 1893 ին:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԵԼԻ ԱՆՅԻՑ

Ի բարձմանէ ամօթոյ մինչև ցայժմ են ամբ	10
Ի Մաւալմանէ շողոքորթութեան ի թերթս հայկականս	9
Ի մտից պճնասիրութեան ի կրօնաւորս Յանգործադրութենէ Ներքին Կանոնադրութեան Ընդհանուր Ժողովոյ	20
Ի հաստատութենէ աներեսութեան	8
Յորոշմանէ հաստատութեան Ընծայարանի	10
Ի կործանմանէ Նահ-Նուպար վարժարանի	6
Ի կործանմանէ թաղային վարժարանաց մայրաքաղաքիս	15
Ի հաստատութենէ տպագրութեան ի Հայս և ի դժբախտութենէ տպարանապետաց, գրաշարաց, հեղինակաց, դասատուաց և դպրաց	28
Ի բարձմանէ հնաղանդութեան ի փոքունց	321
Ի բարձմանէ զաւազանաց յազգային վարժարանաց	20
Ի կորստենէ կողմնացուցին ի Հայս	21
Ի գիւտոյ խաբէութեան	9
Յանկանոնութենէ հաւաքման ազգային տրոց	28
Ի բարձմանէ պարզասիրութեան ի Հայ կանանց	26
Յերկրորդ նորոգութենէ անտարբերութեան ի Հայս	18

ՓՈՒՆԶ

Երբ աղջիկ մը դադրի կարգիւէ դեղեցկութեան ամենահզօր հրապուրչ կորուսած է:

Սիրոյ անձնատուր եղողը մեծութեանց և
խմաստութեան հրաժեշտ կուտայ:

Նրկինք պատիժ սահմանած չեն սիրահա-
րաց երգումներուն համար:

Պզտիկ աղջիկներն պաճուճապատանքով կը
խաբուին, մեծերն ալ երգումով:

Լռութիւնն տրուած է կնոջ իւր միտքը ա-
ւելի աղէկ բացատրելու համար:

Նրբ աղջիկներն ամուսնանալու տարիքի մէջ
են, իրենց լռութիւնը անգամ էրիկ մը կուզէ:

Գեղեցիկ կին մը պարզ հագուելու է աւելի
շնորհք ունենալու համար, տղեղ կինն ալ պարզ
հագուելու է նուազ տղեղ ըլլալու համար:

Գեղեցիկ կանանց ընկերութեան համար իմաս-
տուն մարդոց ընկերութիւնը թողուն կը նմա-
նի կաքաւիկի միսը թողուլ և թութակինն ու-
տել, որովհետեւ ասոր փետուրներն աւելի գեղե-
ցիկ են:

Աւանձնութիւնը խաբուած սիրտերու միա-
թարութիւնն է:

Նրկու տեսակ անձեր կան որոցմէ կրնանք ասպ-
տակուիլ առանց բարկանալու, կիներն և եպիս-
կոպոսները:

Աճէցէ՛ք և քաղճոյստա՛ք, Ամուսնութեան գըլ-
խաւոր վախճանն է. բայց շատ մարդիկ կան որ
այս Աստուածային խօսքերը մտիկ չեն ընել և
պիտի կարգուէին, ընդհակառակն, եթէ վստաչ
լինէին թէ չպիտի աճէին ու բազմանային. Կին
մը սիրելի է իրենց այնքան որքան ամուլ է:

Ամենէն առաքինի կինն այն է որուն վրա-
յօք քիչ կը խօսուի:
Կեանքը ծաղիկ մ' է, սէրն անոր մեղրն է:

Գեղեցիկ կանանց սիրտերը տարեղլիտու շա-
քարեղէններու պէս հանելուկներու մէջ փաթ-
տուած են:

Աւելի ականջներով քան թէ աչքերով փնտ-
ռելու է կին մը:

Եթէ կին մը հարիւր յանգանք ալ գործած
ըլլայ՝ մի զարնէր անոր նոյն խակ ծաղիկով մը:

Կիներն անոր համար կը բամբասուին որով-
հետեւ պտուղ ունեցող ծառերուն միայն քար կը
նետուի:

Օրէնք զնոգներն աչրերն են իսկ բարբերը հաստատողները կիներն են:

Մինչև քսանընիւղ տարեկան կանանց համար աշխարհս դրախտ մ' է մինչև քառասուն տարեկան կանանց համար քառարան մը, իսկ մնացած բոլոր կեանքներնուն մէջ դժոխք:

Սիրոյ վրայ խօսող ծերն ականոց զնոյ կոյրէն աւելի խենդ է:

Խոհեմութիւնն ու սէրն իրարու հետ չեն կըրնար միանալ:

Կնիկը ծեծելը ալիւրի պարկ մը ծեծելու մը նմանի, աղէկը կերթայ գէշը կը մնայ:

ՍԸԿԵ ՆԸԿԵ

Երկու բարեկամներ Բէրա մեծ փողոցին մէջ կառուցուած քարուկիր շէնքի մը առջև կը կայնին.

— Ի՞նչ աղւոր շէնք է սա, կսէ մին մինչև հեմա ասանկ տուն մը շինուած չէր Պօլտոյ մէջ, առաջին անգամն է որ ասանկ տուն մը կը տեսնամ:

— Առանկ է, շատ աղւոր է, Բարիդ շինուած ըլլալու է, կը պատասխանէ միւսը:

— Հայերէն բառարան մը կ'ըստաք ինձի:

— Հրամմեցէք:

— Այս բառարանը ցանկ չ'ունի ետեւը: Բառարանը ցանկ կ'ունենայ.
Հասկա ուղած բառս ի՞նչպէս գտնամ մէջը:

Կին մը պատկերը հանել տալու համար լուսանկարի մը կերթայ. աթոռի վրայ կը նստի և իւր բոլոր ուժը կսկսի թափել որ բերանը շատ պղտիկ ելլէ:

Պատկերհանը տեսնելով անոր այս ճիւղը կըսէ
Ինքզինքնիդ մի՛ նեղէք, տիկին, եթէ կուգէք բերան չեմ շիներ ամենւին:

Համբալ սափրիչ մը հարցսց մարդու մը զոր կարծիւէր:

— Քանի եղբայր էք:

— Եթէ սրկէց ողջ առողջ դուրս ելլամ չորս եղբայր ենք, պատասխանեց ածիւողը:

Ո՛հ, կըսէր հիւանդը մը, մարդ չի գար զիս տեսնելու:

— Այդպէս պէտք է որ ըլլաց, քեզի ո՞վ ըսաւ որ պարտքերդ վճարես:

Երկու եղբայրներ այնչափ շատ կը նմանէին իրարու որ անոնց դրացին անգամ չէր կրնար զանոնք իրարմէ որոշել:

Ասոնցմէ մէկը կը մեռնի, դրացին օր մը միւսին հանդիպելով կը հարցընէ.

— Աստուծոյ սիրեալ, ըսէ ինձի զոն մե-
ռար թէ եղբայրդ:

— Պարոն Յակոբ Քեաղըտխանէէն ախորժե-
ցար նայինք, կրցա՞ր լաւ մը զուարճանալ:

— Շիտակը շատ աղւոր տեսարան ունի ձեր
Քեաղըտխանէն բայց բազմութիւն շատ ըլլալուն
աղէկ մը համը չառնուիր կոր, թէոր աջնչափ
բազմութիւն չըլլայ նէ՛ շատ մարդ պիտի եր-
թար հոն:

Երկու քոյր խնդրոյ մը համար դատարան կը
ներկայանան:

Նախագահն ասոնց մեծին կը հարցնէ.

— Քանի տարու էք օրիորդ:

— Քսան և ութը տարու եմ պարոն նա-
խագահ:

Նախագահը պզտիկին դառնալով կը հարցնէ:

— Դուք քանի տարեկան էք:

— Երեսունը մէկ տարեկան պ. նախագահ:

Նախագահն դիւանադպրին դառնալով կըսէ.

— Զըլլայ որ սխալ արձանագրես, անդրա-
նիկը պզտիկն է:

Ներկայացման մը մէջ դերասան մը իննսուն
տարեկան ծերունիի մը դերը կը կատարէր:

Պառաւին մէկը այս դերասանին հազարով
տքալով տեսարան դալը տեսնելով ըսաւ.

— Տէր ողորմեա . . . կը վայելէ որ ասանկ
ծեր մարդ մը խաղցունեն:

Միամիտ մարդուն մէկը առևտրական գործե-
րէ քաշուած ագարակի մը մէջ կեանք կանցունէր:
Այս մարդն օր մը բարեկամներէն մէկուն
նամակ մը գրելով այսպէս կըսէր:

«Ագարակին կենդանիներուն մեջ ընդհանուր
հիւանդութիւն կը տիրէ. գրէթէ ես ալ քաջա-
ռողջ վիճակ մը չունիմ.»

— Իմացա՞ր, մեր դրացին վարձեալ սնանկա-
ցեր է անցեալ շաբաթու:

— Անիկայ տարին քանի մ'անգամ սնանկա-
նալն բան գործ ըրած է իրեն:

— Խեղճութեանը մի' նայիր, անիկայ գոր-
ծը զիացող մարդ է, անպատճառ բան մը նե-
ւած է մէկ կողմ:

— Այո, խղճմտանքը:

Դինեմոլին մէկը չափազանց արբեալ կէս օրին
գինեատունէն դուրս ելնելուն մէկուն կը հանդի-
պի և արևը ցուցնելով կը հարցնէ անոր.

— Կը խնդրեմ, ըսէ ինձի, լուսին է աս
թէ արև:

Անցորդը գինովին երերուն վիճակը տեսնե-
լով՝ կը պատասխանէ:

— Շիտակը չեմ գիտեր, ես աս տեղացի չեմ:

ԱՌԱՄՆԵՐ

Ճարտարութիւնը բախտի աջ ձեռքն է, չափաւորութիւնը՝ ձախ ձեռքը:

Ծոյլի համար ամեն բան զժուար է:

Շատ պարտք ընողն ազատութիւնն ձեռքէ կը հանէ ու հազար նեղութեանց մէջ կիցնայ:

Աւելի աղէկ է երեկոյին առանց կերակուր ուտելու պառկիլ քան թէ առաւօտուն պարտքով ելլել:

Մանր ծախքերն եթէ շատնան մեծամեծ ժառանգութիւններ կը հատցնեն:

Աւելորդ բաներ գնողը կը հարկադրուի հարկաւորները ծախելու:

Քիչը կրկնուելով կը շատանայ:

Դատարկութիւնը ժանգմէ որ աշխատանքէն աւելի կը մաշեցնէ:

Շատ բանի ձեռք զարնողը քիչը լմցնէ:

Չես սիրուիր թէ որ քեզի միայն սիրես:

Ամենուն բարեկամը ե ոչ մէկուն բարեկամն է:

15879

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Վաճառում է յօդուտ հանգուցեալ հեղինակի
կարօտ քնտանեաց:

2013

